Սույն հայտարարության **«Ուղեկցող փաստաթղթեր»** մասում նշված խմբերին պատկանող ուսանողներին՝ ՀՀ կողմից ուսման վարձի փոխհատուցման /զեղչի/ տրամադրման համար անհարաժեշտ է մինչև 2025-2026թթ.–ի ուսումնական տարվա 1–ին կիսամյակի դասերի մեկնարկին հաջորդող 4-րդ շաբաթվա ավարտը՝ 03.10.2025թ. մինչև ժամը 23:59 ներկայացնել դիմում, որին կից «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամին պետք է ներկայացվեն նույն **«Ուղեկցող փաստաթղթեր»** մասում նշված ցանկով սահմանված և խմբերից մեկին/մի քանիսին համապատասխանելը հավաստող՝ խմբի անվանման տակ թվարկված փաստաթղթերը: Մինչև դիմումը և կից փաստաթղթեը Համալսարանին ներկայացնելը խնդրում ենք հավաստիանալ դրանց ամբողջականության մեջ:

Դիմումները և ուղեկցող փաստաթղթերն ընդունվում են **ՄԻԱՅՆ** էլեկտրոնային տարբերակով: Դիմումները ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակով լրացնելուց հետո անհրաժեշտ է ստորագրել և լուսածրված (scan) տարբերակն ու ուղեկցող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկել **1/ՄԵԿ/** ֆայլով՝ ստորև նշված էլեկտրոնային հասցեներից որևէ մեկով՝ կախված ուսանողի ֆակուլտետից: Բացի այդ էլեկտրոնային նամակի Subject դաշտում անհրաժեշտ է լրացնել՝ «**Զեղչի դիմում և կից փաստաթղթեր____անուն___ազգանուն**», հակառակ պարագայում առկա է դիմումի կորստի հավանականություն:

- ✓ ԻԿՄ ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_ima@ufar.am հասցեին
- ✓ Իրավաբանության ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_droit@ufar.am հասցեին
- ✓ Կառավարման ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_gestion@ufar.am հասցեին
- ✓ Մարքեթինգի ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_marketing@ufar.am հասցեին
- ✓ Ֆինանսների ֆակուլտետի ուսանողները դիմումներն ու ուղեկցող փաստաթղթերն ուղարկում են ap_finances@ufar.am հասցեին

Ուղեկցող փաստաթղթեր

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց խումբ՝
   1.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, ինչպես նաև ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   1.2. Առանց ծնողական խնամքի մնացած լինելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց խմբին պատկանելու փաստը հավաստող փաստաթղթերի՝ ծնողների մահացած կամ ծնողական իրավունքներից զրկված, անգործունակ ճանաչված լինելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու վերաբերյալ դատական ակտի կամ տեղեկանքի, վկայականի կամ այլ փաստաթղթի պատճենները կամ օրենքով սահմանված կարգով մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ ճանաչվելու, կալանավորված կամ ազատազրկված լինելու /եթե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու որոշում չի կայացվել/ փաստը վկայող դատական ակտի կամ այլ փաստաթղթերի

բնօրինակների լուսածրված տարբերակը, որոնք կարող են հավասարեցվել վերոգրյալ փաստաթղթերին:

2. Հաշմանդամ կամ հաշմանդամի կարգավիճակին հավասարեցված անձանց խումբ՝
   2.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ դրանց բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   2.2. Հաշմանդամության կամ հաշմանդամի կարգավիճակին հավասարեցված կարգավիճակ ունենալու փաստը հավաստող համապատասխան փաստաթղթի բնօրինակի լուսածրված տարբերակը՝ տեղեկանք և այլն:

3. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող անձանց խումբ,
   3.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   3.2. Հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինվորական լինելու փաստը հավաստող փաստաթղթի, այդ թվում՝ տեղեկանքի, բնօրինակի լուսածրված տարբերակը:

4. Զոհված /մահացած/ զինծառայողի ծնող **կամ** ամուսին (կին) **կամ** մինչև 27 /քսանյոթ/ տարեկան զավակ հանդիսացող անձանց խումբ՝
   4.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   4.2. Զավակի, ծնողի կամ ամուսնու /կնոջ/ զոհված /մահացած/ զինծառայող լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակի լուսածրված տարբերակը, այդ թվում՝ ՀՀ ՊՆ–ի կողմից տրված համապատասխան տեղեկանքի **կամ** համապատասխան փաստը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   4.3. Բարեկամական կապը հավաստող հետևյալ փաստաթղթերից մեկը՝
      4.3.1. Զոհված /մահացած/ զինծառայողի ծնող լինելու դեպքում՝ Զոհված /մահացած/ զինծառայող զավակի ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
      4.3.2. Զոհված /մահացած/ զինծառայողի ամուսին /կին/ լինելու դեպքում՝ Զոհված /մահացած/ զինծառայողի և դիմում ներկայացնող անձի ամուսնության վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
      4.3.3. Զոհված /մահացած/ զինծառայողի զավակ լինելու դեպքում՝ ծննդյան վկայականը կամ կամ հայրության ճանաչման մասին տեղեկանքը **կամ** օրինական ուժի մեջ մտած և ծնող–զավակ բարեկամական կապը հավաստող դատական ակտի բնօրինակի լուսածրված տարբերակը,

5. Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ սովորող անձանց խումբ՝
   5.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,

5.2. Նպատակային ուսուցմամբ ուսանելու մասով ՀՀ–ի հետ կնքված պայմանագրի բնօրինակի լուսածրված տարբերակը:

6. Սոցիալապես անապահով անձանց խումբ,
   6.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   6.2. Ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների լինելու փաստը հավաստող և ՀՀ Սոցիալական հարցերի նախարարության կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը:

7. Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանող հանդիսացող անձանց՝
   7.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   7.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման թիվ 1–ին հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   7.3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման թիվ 1–ին հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում վերջին 5 /հինգ/ տարում (այդ թվում ընդհանուր հանրագումարով) մշտապես բնակվելու փաստը հավաստող տեղեկանքի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   7.4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման թիվ 1–ին հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերերից մեկում հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն/ներն ավարտած լինելու փաստը հաստատող ատեստատի բնօրինակի լուսածրված տարբերակը:

8. Մարտական գործողություններին մասնակցած անձանց խումբ՝
   8.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   8.2. Մարտական գործողության մասնակից լինելու փաստը հավաստող փաստաթղթի՝ զինգրքույկի բնօրինակի լուսածրված տարբերակը և/կամ համապատասխան տեղեկանքի բնօրինակը ու պատճենը:

9. Առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ 2 /երկու/ և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց խումբ՝
   9.1. Անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակի լուսածրված տարբերակը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ծննդյան վկայականի բնօրինակի լուսածրված տարբերակը,
   9.2. 2 /երկու/ կամ ավելի անչափահաս երեխաների ծննդյան վկայականների բնօրինակների լուսածրված տարբերակը: